

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 և 15 դասաժամ), «ՀԵՊ» (5 դասաժամ), «Համաշխարհային պատմություն» (4 դասաժամ), «Հայոց պատմություն» (4 դասաժամ), «Հասարակագիտություն» (1դասաժամ), «Հայրենագիտություն» (1 դասաժամ), «Քիմիա» (3 դասաժամ), «Մաթեմատիկա» (11 դասաժամ), «Կենսաբանություն» (6 դասաժամ), «Աշխարհագրություն» (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 07.09.2022թ.-ից մինչև 20.09.2022թ.ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 15:00-ին «Դասվար», «Մաթեմատիկա», «Աշխարհագրություն» առարկաների և սեպտեմբերի 28-ին՝ ժամը 15:00-ին «ՀԵՊ», «Համաշխարհային պատմություն», «Հայոց պատմություն», «Հասարակագիտություն» , «Հայրենագիտություն», «Քիմիա», «Կենսաբանություն» առարկաների համար «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք.Կապան, Ա. Մանուկյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել 093 933 233, 0285 5-26-39 հեռախոսահամարով: